

Հարց

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ ինչ պայմանների առկայության դեպքում կարող է երկարաձգվել լիցենզիայի կամ թույլտվության գործողության ժամկետը:

Պատասխան

Կարգավորողն իրավասու է լիցենզավորված անձի կողմից ներկայացված դիմումի հիման վրա երկարաձգել լիցենզիայի կամ ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության գործողության ժամկետը նախկինում տրված լիցենզիայի կամ թույլտվության ժամկետի տևողությամբ, եթե՝

- 1) լիցենզավորված անձը գործել է առաջին անգամ իրեն տրված լիցենզիայի կամ թույլտվության պայմանների շրջանակներում.
- 2) առաջին անգամ տրված լիցենզիայի կամ թույլտվության գործողության ժամկետի ընթացքում լիցենզավորված անձը գործունեություն է իրականացրել առանց սույն օրենքի և դրա հիման վրա ընդունված կանոնների կամ կանոնակարգերի էական խախտման: